

արարչութեանն որ զայս կարծէ, չէ 'ի դէպ. քանզի ոչ եղև անդ Աստուած աշխատ, և ոչ ունէր պէտս հանգըստեան. քանզի անդ միայն կամքն աստուծոյ զործ էր կատարեալ: Զի ասաց և եղև, հրամայեաց և հաստատեցան: Իսկ 'ի մարդ լինելն Աստուծոյ, կամեցաւ զմեղօք հնացեալ բնութիւնս մարդկան նորոգել, և զանէծս երկրի յօրհնութիւն փոխել, մեռանելովն՝ չարչարանօք մարմնոյն՝ յաւուր ուրբաթուն: Եւ 'ի խաչաչարչար մահուանէն իջեալ 'ի գերեզման, հանգեաւ յաւուր շաբաթու. յորում աւուր և զտունն չարչարանաց հոգւոց մարդկան զգոխսն՝ քակեաց, և ըզդրախտն հանգստեան եբաց...: Եւ մեք թէպէտ և հրէաբար ոչ պատուեմք զշաբաթս, այլ սակայն զյիշատակ սրբոց մարտիրոսացն կատարելով պատուելք զշաբաթս ըստն իկիական կանոնին՝ որ սահմանեցին յաւուր շաբաթու տօնել զյիշատակ սրբոցն: Զի տեսին դաւք նահապետացն՝ զմահ որդւոյն Աստուծոյ յաւուր ուրբաթու, և զհանգիստն՝ յաւուր շաբաթու: Եւ այնու սիրով բարբոքեալ դիմեցին 'ի պէս պէս տանջանս. և մարտիրոսացան բիւրք բիւրոց և հազարք հազարաց, իբրև զաստեղս երկնից, և զծաղիկս լեռանց՝ որոց ոչ գոյ թիւ: Որ հրով և սրով և բանտիւ և կապանօք, քերանօք և ժանեօք գազանաց չարչարեցան և մեռան յուսով անմահ կենացն, և անթառամ պսակացն. որոց տօնն և նահատակութիւնն՝ մեր ամուր պարիսպ է, և բարձր աշտարակ աստէն յայսմ աշխարհիս: Որք յօժար կամօք զյիշատակս նոցա կատարեմք, և նոցա պսակացն ակն ունիմք. միայն թէ զօրինակ համբերութեան նոցա յանձին ունիցիմք: Զի որ լեզուի համբերէ վասն պատուիրանացն Քրիստոսի, այնպէս է՝ որպէս թէ որ համբերեաց վասն անուանն Քրիստոսի: Եւ որ բոցոյ ցանկութեան համբերէ, կամ հեշտութեան մեղաց, կամ ուտելոյ և ըմպելոյ, այնպիսին որպէս հրով պատարագեցաւ Աստուծոյ: Եւ որ բարկութեան տանի և արգելու, կամ զիւրն և կամ զայլոցն,

այնպիսին իբր թէ գազանաց յաղթեաց: Եւ այս է զոր մարդարէն ասէ, վասն քո մեռանիմք զօրհանապազ, քան զի բնական մահն՝ մի անգամ է, իսկ յօժարութեամբ յանձնառական մահն մարդոյ, որ վասն Աստուծոյ սիրոյն է, յամենայն ժամանակ իւրն կամեցողին կարելի է: Զի մարդ, որ զիւր մարմնոյ կամքն չկատարէ, մեռեալ է կենդանւոյն, և պսակի ընդ սուրբսն Աստուծոյ: Եւ այսպէս ամենայն օր, իւրն վկայ ունի. և մարտիրոս՝ բոլոր տարին: Որք զիւրեանց արարիչն պատուեալ են մարդիկ մահուամբ 'ի սէրն Աստուծոյ, որպէս և ասէ սուրբն Եփրեմ, թէ ամենայն օր իւրն իսկ վկայ ունի առանձինն: Եւ այն սուրբն որ ինքն զԱստուած պատուեալ է մահուամբն իւրով, և նմա յիշատակ կատարի աշխարհի. այն օրն, որ իւր յիշատակն է՝ Աստուծոյ դրախտին և բարեաց բանալեպան է. և իւր բարեխօսութեամբն Աստուծոյ ողորմութեանցն բաշխող է: Վասն այսորիկ ջերմն սիրով և յօժար կամօք պարտ է քրիստոնէիցն 'ի ժամատեղն երթալ, և մանաւանդ 'ի տօնս և յիշատակս սրբոցն Աստուծոյ: Զի առանց չարչարանաց և տանջանաց՝ նոցին պսակացն և փառացն արժանաւորք եղիցին: Որպէս և է ստոյգ վկայած է յաստուածաբան վարդապետաց, թէ՝ տօնասէրն չէ զրկած 'ի պսակացն մարտիրոսաց, այլ և հազորդ նոցին փառաց, առանց գանից և տանջանաց. որոց փառացն և պսակացն արժանի աւրասցէ զմեզ տէր Աստուած, որք յաղթից տունս են եկած, և ունկնդիր գրոցս նստած:

ԳԻՍԱԽՈՐ ԱՍՏԵՂՔ

Բլանդամուր հելուետիացի աստեղաբաշխը, որուն համար ըսուեցաւ թէ գուշակութիւն մ'ըրած ըլլայ որ գիտաւոր աստղ մը տարւոյս ընթացիցը մէջ երկրագնտիս զարնուելով՝ աշխարհս պիւ

տի կործանի, մօտերս Սուրբ-Դաւթի վրա
գրոյն մէջ յօդուած մը հրատարակեց,
որով սուտ կը հանէ թէ այնպիսի բան
իր ոչ մտքէն անցեր է և ոչ ալ ըսեր է:
Այս առթիւ համառօտեմք հետագայ
մէկ քանի տեղեկութիւններն, յիշելով
որ արդէն երկարօրէն խօսուած է գի-
տաւոր աստեղաց վրայ, Բաղմովիպին
մէջ ասկէ քանի մը տարի առաջ, ցու-
ցնելով որ եթէ զարնուելու ալ ըլլան
երկրիս՝ ամենեւին չեն կրնար փասել:

Գիտաւորաց ներքին բնութիւնը տա-
կաւին անծանօթ է, բայց այս ինչ ծա-
նօթ է որ մթնոլորտի մէջ ձևացած տե-
սակ մը մէտէորայ չեն, ինչպէս ոմանք
երեակայեցին, այլ նուրբ և ռմպային
նիւթոց ահագին զանգուածներէ ձևա-
ցած մնայուն իրական աստղներ են:
Զիրենք կազմող մարմնոյն քանակը հա-
մեմատութեամբ ամենափոքր է, ամպ
մ'է, որ եթէ թանձրանայ ամենաոչինչ
միջոց մը կը բռնէ. բայց այն աստիճանի
անօրացած ու նրբացած է, որ տիեզե-
րաց մէջ անհուն միջոց կը բռնէ. և հե-
տեաբար այնչափ թափանցիկ՝ որ եր-
կրագնտիս ու աստեղաց մէջէն անցնե-
լով, բաւական չըլլար զանոնք խաւա-
րելու: Եւ զարձեալ իրենց արտաքին
երեւուցած անօրութեան նայելով, ե-
րեկոյեան դէմ հորիզոնին վրայ տես-
նուած ու արեւէն պայծառացած ամ-
պերն համեմատութեամբ շատ աւելի
թանձր մարմիններ են: Երկրիս մեծու-
թեամբ գիտաւոր մը, ըստ Պապինէ Գադ-
դիացոյն հաշուին, 30 հազար քիլո-
կրամ կը կշռէ:

Անթիւ են գիտաւորք, բայց իրենց
հեռաւորութեան պատճառաւ հագիւ
երբէք տեսանելի: Մոլորակաց նման
արեւուն ձգողութեան ենթակայ են. և
իրենց շրջանին մէջ անհուն հեռաւորու-
թիւն կ'առնուն արեւէ, նաև շատ ան-
գամ և ոչ իսկ կը վերադառնան, ուրիշ
մոլորակային զրութեանց այցելութեան
երթալով, և կամ կը կորսուին տիեզե-
րաց անչափութեան մէջ:

Գիտաւորաց վրայ երեք մաս կը զա-
նազանուին. գլոխը կամ միջոցը, որ

կեդրոնական սկաւառակն է և աւելի
լուսաւոր և աւելի խիտ մասն է. գէւր,
այսինքն այն լուսաւոր միգամածութիւն
որ կը պատէ զմիջուկը. տոշտը կամ
պոչը, այսինքն ետեւէն ձգուած այն
լուսաւոր հետքը, որ երբեմն մինչև 16
միլիոն փարսախ երկայնութիւն կ'ու-
նենայ: Եւ գիտաւորաց նոյն իսկ այս
խառնակ և անորոշ ձևն հաստատել
կու տայ այն կարծիքն, որ միգէ ու
ծուխէն շատ աւելի նուրբ և անօր գո-
յացութենէ մը կազմուած ըլլան. վասն
զի, ինչպէս ըսինք, իրենց մարմնոյն
ետեւէն ամենափոքր կարգի աստեղք
անգամ կը տեսնուին, որոնք երկրէս
բարձրացած նուրբ շոգիէն անտեսանե-
լի կ'ըլլան: Ուրեմն կարելի է վախճալ
այսպիսի նուրբ փետրոյ մը հարուա-
ծէն:

Գիտաւոր աստեղք իրենց ընթացքը
ընելէն ետքը նորէն կ'երևան. և գի-
տութիւնը կրցեր է հաշիւներով որոշել
ոմանց դարձն և ճանչնալ զանոնք. բայց
այսպիսի գիտաւորք ութ հատ են միայն,
մէկն երկայն պարբերութեամբ, և միւս
եօթը կարճ պարբերութեամբ: Ռամիկը
երկիւղիւ և կասկածանօք կը նայի գի-
տաւորաց իբրև գուշակ շարեաց: Յամին
1832, գիտաւոր աստղի մը երկրիս հետ
զարնուելու գուշակութիւնը զամենը
դողացուց: Ասիկայ Պիէյա ըսուած գի-
տաւորն էր, որ իր շրջանը գրեթէ եօթը
տարուան մէջ կը կատարէ: Ըստ գու-
շակութեան՝ այն տարւոյն հոկտեմբերի
20ին պիտի զարնուէր երկրիս այս գի-
տաւորը, և ճիշտ նոյն օրը երկրիս պա-
րունակէն 7 հազար փարսախ հեռաւո-
րութեամբ անցաւ՝ առանց փնտս մը
պատճառելու: Սակայն այս գիտաւորը,
որ եօթը տարին մէկ մը այցելութեան
կու գայ մեզի, կարելի է որ անգամ
մ'ալ երկրիս հետ երես առ երես գայ:
Բայց Արակոյի հաշուին նայելով, 281
միլիոն գիպուածոց մէջ մէկն հաւանա-
կան է որ երկիրս գիտաւորի մը միջո-
կին զարնուի, և ռաւսն հաւանական է
որ միգաւմաճութեամբ հանդիպի. և ե-
թէ հանդիպի ալ միգամածութեանը և

կամ պոչին, որ ըստ ոմանց հաշուին, շատ անգամ կը պատահի դարու մը մէջ, ամենեւին պատճառ չկայ երկիւղի. ինչու որ գիտաւորք ամենանուրբ կազային գոյացութենէ բաղկացած ըլլալով բոլորովին անզգալի կ'անցնի մեր մօտէն, մանաւանդ թէ որչափ երկրիս կը մօտենան, այնչափ իրենց երագութիւնը կը կորսնցունեն, որ ծայրագոյն աստիճանի է արեւուն մօտ. ուր եւ թէ նոյնպիսի երագութեամբ շոգին ալ արձակելու ըլլայ, կրնայ յիշաւի ահաւոր հետեանք ունենալ:

Համարինք հնարաւոր միակ դէպքն, որ է երկրիս գիտաւորին միջոցիկն զարնուի. կրնանք դարձեալ ապահով ըլլալ, վասն զի այն միջուկն ալ նոյն նիւթէն կը կարծուի, և եթէ հաստատուն մասն ալ ունենայ, վերջին աստիճանի փոքր է. ուստի կնքենք Պապինէի մէկ խօսքը մէջ բերելով, թէպէտ քիչ մը չափազանցութիւն զրուցած ըլլայ, որ եթէ երկրիս գիտաւորի մը զարնուի այնչափ կ'այլայլի իր կայունութենէն, որչափ շոգեկառքի բազմութիւ կարաւան մը իր արագ ընթացից ժամանակ ճանճի մը հանդիպելով կործանի:

ՀԻՆԳ ՇԱՐԱԹ ՕԴԱՊԱՐԿԻ ՄԷՋ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՐԻՑ ԱՆԳՂԻԱՑԻՈՑ

ՅԱՓՐԻԿԷ

(Տես երես 61.)

ԳԼՈՒԽ ԻԷ.

Զարհուրելի չերմոքիւն. — Զառածուք աչաց. — Զրին յետին կարիւններ. — Յուսահատութեան գիշեր. — Անձնատպանութեան փորձ. — Սխմունք. — Ուստիս. — Արիւնք և իր մատակը:

Յաջորդ օրը տղերքորին առաջին խընամբը ծանրաչափը դիտելն եղաւ. Այլ հազիւ թէ անդիկին սիւնակը զգալի ճնշմունք մը կրած էր:

— Ամենեւին ոչինչ, ըսաւ ինքնիրեն, ամենեւին ոչինչ:

Ելաւ նաւակէն որ օդը դիտէ. այլ մի և նոյն ջերմութիւնը գտաւ, մի և նոյն պարզութիւնը և մի և նոյն անփոփոխելիութիւն:

— Պէտք է արդեօք յուսահատիլ, կանչեց ինքնիրեն:

Ճոյ, իր մտածութեանը մէջ ընկըղմած և իր հետազոտութեան առաջագրութիւնը մտածելով՝ բան մը չէր ըսեր:

Քէննըտի շատ հիւանդ և անհանգիստ ընող այլայլութեամբ վեր կանգնեցաւ. սաստիկ ծարաւ կը զգար: Լեզուն ու շրթունքները ուռած՝ հազիւ թէ ձայնի հնչիւն մը կրնային արտաբերել:

Դեռ ևս քանի մը կաթիլ ջուր կար. ամենքը գիտէին, ամենքը անոնց վրայ կը մտածէին ու դէպ 'ի անոնց կը միտէին. այլ և ոչ ոք կը համարձակէր դէպ 'ի անոնց ձեռք երկնցընելու:

Այն երեք ընկերք, այն երեք բարեկամք դժնեայ աչօք և անբան անյագութեան զգացմամբ մը մէկմէկու կը նայէին, որ գլխաւորապէս Քէննըտի վրայ զգալի կ'ըլլար. իր զօրաւոր կազմութեամբը աւելի շուտ կ'ընկճէր այն անտանելի զրկմունքէն: Բոլոր օրը մոլեգին խելայեղութեամբ մը չարչարուեցաւ. կերկերաձայն կանչելով, ու ձեռքերը խածնելով՝ ինչպէս թէ երակնէրը ուղեւոր բանալ արիւնը խմելու համար, վեր վար կ'երթար կու գար:

— Ախ, կանչեց. ծարաւի աշխարհ. նա մանաւանդ յուսահատութեան աշխարհ լաւագոյն է կոչել զքեզ:

Յետոյ յետին ուժաթափութեան մէջ ինկաւ. և ալ այնուհետեւ իր այլայլած շրթանց մէջէն շնչառութեան սուլումը միայն կը լսուէր:

Իրիկուան դէմ նմանապէս ճոյի վրայ ալ խենթութեան սկիզբ մը եկաւ. այն աւազուտ ընդարձակ ուստիսը ինչպէս անհուն լիճ մը կ'երևար իրեն, պայծառ ու ջինջ ջրերով. և շատ անգամ ինքզինքը այն բորբոքեալ գետին վրայ